

Հարգելի գործընկերներ, հյուրեր

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն առիթ է մեկ անգամ ևս խոսելու մեր երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ուղղությամբ տարվող աշխատանքների, ձեռքբերումների և առկա խնդիրների մասին:

Ուրախությամբ պետք է փաստեմ, որ Հայաստանում այս ուղղությամբ նշանակալի արդյունքներ են արձանագրվել:

Կարևորելով խնդիրը՝ Հայաստանի կառավարությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առաջին ազգային ծրագիրը հաստատել է դեռևս 2002 թվականին: Այս տարեվերջին ավարտվում է ազգային երրորդ ծրագիրը: Միաժամանակ, դեկտեմբերին ՀՀ կառավարություն՝ հաստատման կուղարկվի 2017-2021 թվականներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի փաթեթի նախագիծը:

Եթե ոլորտում արձանագրված հաջողություններն ամփոփենք կոնկրետ արդյունքներով, ապա առաջինը պետք է նշենք, որ Հայաստանում 2007թ. ի վեր կանխարգելիչ բուժում ստացած մայրերից ծնված 150 երեխայի մոտ ՄԻԱՎ վարակի դեպք չի արձանագրվել:

Երկիրը հասել է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման վավերացման համար Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված թիրախներին, ինչի արդյունքում ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանի 53 երկրների թվում Հայաստանն առաջինն արժանացավ մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացումը փաստող հավաստագրի:

Կարևոր հաջողություն է, որ պատշաճ վերահսկողության արդյունքում 2001թ.-ից սկսած, հանրապետությունում չի արձանագրվել դոնորական արյան միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման որևէ դեպք:

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային պատմության մեջ մեր երկիրն արձանագրել է աննախադեպ ձեռքբերում՝ համաճարակի ոչ միայն կասեցում, այլև խտացման փուլից վերադարձ նախնականին: Այդ է վկայում այն փաստը, որ ներկայումս ռիսկային վարքագիծ ունեցող խմբերից և ոչ մեկում ՄԻԱՎ-ի տարածվածությունը չի գերազանցում 5%-ը, իսկ հղիների շրջանում այն զգալիորեն ցածր է 1%-ից:

Հարգելի ներկաներ, ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում այժմ անվճար հակառետրովիրուսային բուժում է տրամադրվում ՄԻԱՎ վարակ ունեցող 1150 մարդու՝ տալով նրանց լիարժեք կյանքով ապրելու, աշխատելու և իրենց ընտանիքների մասին հոգալու հնարավորություն: Բուժումը ոչ միայն զգալիորեն նվազեցնում է մահացությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների շրջանում, այլև ունի կանխարգելիչ նշանակություն, քանի որ նվազեցնում է ուրիշին վիրուսի փոխանցման հավանականությունը:

Բարելավվել է նաև ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական հսկողությունը: Հղիների ավելի քան 95%-ը, ինչպես նաև տուբերկուլոզով բոլոր հիվանդները ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն են անցնում: Կրթական ծրագրերի շնորհիվ բարձրացել է բուժաշխատողների՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ինչը նպաստում է խորհրդատվության և հետազոտության որակի և ծավալների բարձրացմանը:

Կարևոր ձեռքբերում է հանրապետության գյուղական և քաղաքային 140 համայնքի բնակչության ամենախոցելի խմբում՝ միգրանտների և նրանց ընտանիքների շրջանում, ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացումը: ՁԻԱՀ-ի կենտրոնի շարժական բուժախտորոշիչ կլինիկաները, բժշկական խմբերը ՄԻԱՎ վարակին առնչվող բժշկական ծառայությունները, այդ թվում՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը տրամադրում են տեղերում:

Առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնն արդյունավետ իր աշխատանքով գտնվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի առաջին գծում՝ համակարգելով առողջապահական հիմնարկների այդ ոլորտում աշխատանքները:

Օգտվելով առիթից, ցանկանում են շնորհակալություն հայտնել Ռուսաստանի Դաշնության կառավարությանը, Գլոբալ հիմնադրամին, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրին և մյուս

գործընկերներին՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին աջակցելու համար:

Հարգելի գործընկերներ, այս և չհիշատակված ձեռքբերումների կողքին դեռևս առկա են նաև որոշ խնդիրներ: Դրանցից կուզեի առաջին հերթին ընդգծել հիվանդության ուշ ախտորոշումը: Մտահոգիչ է և այն, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց միայն կեսը գիտի իր կարգավիճակի մասին: Մինչդեռ հիվանդության վաղ ախտորոշումը, ժամանակին սկսված հակառետրովիրուսային բուժումը հնարավորություն են տալիս արդյունավետորեն կառավարելու հիվանդության զարգացումը: Հետազոտությունները վկայում են, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդը ժամանակին ախտորոշվելով, բուժում սկսելով և այն պարտաճանաչորեն շարունակելով կարող է ապրել այնքան, որքան կապրեր առանց ՄԻԱՎ վարակի:

Ուզում եմ նաև հիշեցնել, որ Հայաստանը որդեգրել է ՄԱԿ-ի՝ ՁԻԱՀ-ը հաղթահարելու հավակնոտ նպատակներին հասնելու մոտեցումները:

Դրանցից առանցքայինը ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակի իմացությունն է՝ համապատասխան հետազոտություններ անցնելու միջոցով: Անհրաժեշտ է անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն՝ անկախ առողջական վիճակից և գանգատների առկայությունից: Մենք կարևորում ենք այդ հետազոտությունների հասանելիության ապահովումը՝ խրախուսելով հետազոտությունն անցնելու շարժառիթի ձևավորումը:

Ահա թե ինչու բոլորիդ առաջարկում եմ հետևելու իմ, պարոնների Վոլնիկինի և Բուզետոյի օրինակին և այս հանդիպման ավարտին ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության եվրոպական շաբաթին՝ հետազոտություն անցնելով Ռուսաստանի Դաշնության կողմից նվիրաբերված շարժական բուժախտորոշիչ կլինիկայում: